



Նախագահի Գրասենյակ

2020 թվականի ապրիլի 9

Բարի լույս LACC ընտանիք.

Ես ներողություն եմ խնդրում, որ երեկ բաց եմ թողել սա ուղարկել: Առաջին անգամն է, որ ես չկարողացա ձեզ հետ հաղորդակվել: Երեկ LACC- ի համար շատ տխուր օր էր: Մենք կորցրինք մեր աշխատակիցներից մեկին: Մեր ինֆորմացիոն տեխնոլոգիա բաժնի ղեկավար Կարվե Չանդան մահացավ երեկ առավոտյան: Խոր ցավով փոխանցում եմ այս լուրը և խնդրում եմ, որ նրա ընտանիքին պահեք ձեր մտքերում և աղոթեք նրանց համար: Նաև խնդրում եմ, որ մեր LACC Ինֆորմացիոն Տեխնոլոգիայի բաժնի աշխատակազմին պահեք ձեր մտքերում ու աղոթեք նրանց համար, քանի որ նրանք երկու կորուստ են տեսել, Ինֆորմացիոն Տեխնոլոգիայի բաժնի մենեջեր Խուան Մենդոզան ընդամենը մեկ տարի առաջ էր մահացել:

Շատ տեղեկություններ կան, որոնք ես պետք է այսօր կիսվեմ ձեզ հետ:

Մենք մի քանի կայքեր ունենք ձեզ հետ կիսվելու, որոնք ձեզ համար շատ տեղեկություններ և ռեսուրսներ ունեն:

- 1) www.FindHelp.org Պարզապես մուտքագրեք ձեր փոստային ինդեքսը, երբ այս կայքը այցելեք, և այն կտանի ձեզ այնպիսի ռեսուրսների մոտ, ինչպիսիք են գտնել սննդի օգնություն, վճարել կոմունալ ծախսերը, հագուստի, տրանսպորտի, փողի, խնամքի, աշխատանքի և այլ անվճար կամ նվազեցված գներով ծրագրերի վերաբերյալ ձեր փոստային ինդեքսի մերձակայքում:
- 2) Որպեսզի ուսանողները և / կամ իրենց ընտանիքները ստանան որևէ COVID-19 համաճարակի համար նախատեսված օգնություն, ուսանողները և նրանց ընտանիքները պետք է ներկայացնեն իրենց հարկերը: Կան մի քանի տարբերակներ, որոնք անվճար են, և ամեն ինչ կարելի է անել առցանց:
 - <https://www.irs.gov/filing/free-file-do-your-federal-taxes-for-free>
 - <https://www.getyourrefund.org/> Մա մի կայք է Ամերիկայի համար, որը VITA-ի (կամավոր եկամտահարկի գծով օգնություն) միջոցով ստեղծել է գործընկերություններ նահանգով մեկ:
 - <https://www.myfreetaxes.org/> Մա համագործակցություն է United Way Worldwide- ի և HR Block- ի միջև: Ձեր տեղեկատվության համար, կարծես թե հավելյալ վճար կա, եթե 1099 ունեք:

Նոութբուքի բաշխում- Եթե դիմել եք նոութբուքի համար, ապա պարբերաբար ստուգեք ձեր ուսանողական էլեկտրոնային փոստը: Chromebooks- ի բաշխումը տեղի է ունենում այժմ (օրական 500 և ավելին, ինչպես նաև առաքում ուսանողների տուն), սակայն ուսանողների

կողմից պահանջվում է հաստատել բնակության հասցեն իրենց LACCD էլեկտրոնային փոստի միջոցով: Անօթևան ուսանողները կարող են օգտագործել ապաստանի հասցեն, սա արդեն տեղի է ունենում և լավ է աշխատում:

Ակադեմիական գործերի բաժնի կողմից

Դուք բոլորդ երեկ հաղորդագրություն ստացաք փոխնախագահի անկյունից՝ PASS/ NO PASS -ի վերաբերյալ:

PASS/ NO PASS գնահատման տարբերակներ

Ուսանողները կկարողանան դիմում ներկայացնել այս կիսամյակի ցանկացած դասի համար՝ ձևակերպելու PASS/ NO PASS գնահատականի տարբերակներից մեկը, և դիմումի հիման վրա գործընթացը կհաստատվի: Դիմում խնդրագրերը հասանելի են առցանց երեքշաբթի օրվանից՝ 2020 թվականի ապրիլի 7-ից, <http://laccd.edu/Students/Pages/Student-Forms.aspx> կայքում: Ահա մի քանի կարևոր տեղեկություններ Pass/ No Pass գնահատման վերաբերյալ:

Հաստատությունների մեծամասնությունը չի հաշվում Pass/No Pass-ը GPA-ի ուղղությամբ, սակայն, որոշ հանգամանքներում, անցողիկ գնահատականը հաշվարկվում է 2.0 մակարդակով, ինչը կարող է բացասաբար ազդել ուսանողի ընդհանուր գնահատականի վրա:

- Մասնավոր և արտերկրյա համալսարաններն այլ մոտեցում ունեն Pass/No Pass-ի գնահատման վերաբերյալ:

- Փոխանցման ենթակա հաստատությունների մեծ մասը, ներառյալ CSU, UC և ավարտական կամ մասնագիտական դպրոցները, պահանջում են դասընթացներ, որպեսզի մասնագիտական դասերը հանձնված լինեն տառային գնահատականով: Կարող է այնպես պատահել, որ Pass գնահատականի պատճառով ուսանողը ստիպվա՞ջ լինի կրկին վերցնի համալսարան տեղփոխվելուց առաջ կամ հետո:

- UC-ին ուշադրություն չի դարձնելու է Pass/No Pass-ով թույլատրելի միավորների ընդհանուր քանակի սահմանափակմանը, սակայն ուշադրություն է դարձնելու տրանսֆերային պահանջների կամ մասնագիտական դասերի՝ տառային գնահատականով ավարտած լինելու վրա:
- Տրանսֆերային, մասնագիտական կամ շրջանավարտ հաստատությունը կարող է սահմանափակել փոխանցվող թույլատրելի միավորները, որոնք վերցված են որպես Pass/No Pass: Հնարավոր է, որ պահանջվեն տառային գնահատական Nursing ծրագրի դասընթացի համար:
- Ուսանողներին խրախուսվում է խոսել խորհրդատուի հետ՝ քննարկելու Pass/No Pass դաս վերցնելու իրենց տարբերակներ և այն մասին, թե ինչպիսի ազդեցություն կունենա այն իրենց գիտական դիրքի, ընդունելության և ֆինանսական աջակցության վրա, ի թիվս այլ ոլորտների:

ADOBE CREATIVE CLOUD-Ը ՀԱՍՄԱՆԵԼԻ Է ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ

Քոլեջի փակման արդյունքում ուսանողների մուտքը լաբորատորիաներում և դասարաններում Adobe Creative Cloud-ի օգտագործումը ուսանողների համար անհնար դարձավ: Adobe-ի ընկերությունը տուժած ուսանողների և դասախոսների համար տնային պայմաններում ժամանակավոր մուտք է ապահովել, որպեսզի կարողանան հեռակա կարգով շարունակել իրենց աշխատանքը: Այդ մուտքը հասանելի կլինի մինչև 2020 թվականի մայիսի 31-ը: Դիստրիկտի Ինֆորմացիոն Տեխնոլոգիայի բաժնի թիմն աշխատել է այն ուղղությամբ, որպեսզի մեկ մուտքով Adobe Creative Cloud-ից հնարավոր լինի օգտվել: Խնդրում ենք հետևել ստորև նշված հրահանգներին՝ ձեր անձնական սարքի մեջ Creative Cloud Desktop Apps-ն ունենալու համար:

1. Այցելեք <https://creativecloud.adobe.com> կայքը և օգտագործեք ձեր դպրոցական տվյալները մուտք գործելու համար: Անհրաժեշտ է օգտագործել ձեր @student.laccd.edu էլփոստի հաշիվը:

2. Դուք կուղղորդվեք Microsoft-ի կայքը, որտեղ պետք է կրկին մուտքագրեք ձեր դպրոցական տվյալները:

Կրկին մուտքագրեք @student.laccd.edu-ն և սեղմեք Next: Դուք կուղղորդվեք դեպի LACCD մուտքի էջ: Մուտքագրեք ձեր LACCD գաղտնաբառը՝ շարունակելու համար:

3. Creative Cloud կայքէջից փնտրեք և ներբեռնեք ձեր ցանկալի ծրագիրը: Բոլոր ծրագրերը նայելու համար սեղմեք կայքի վերևում գտնվող Apps-ը: Լրացուցիչ տեղեկությունների համար, թե ինչպես ներբեռնելու կամ տեղադրելու ծրագրերը, տե՛սեք Download and Install Creative Cloud apps-ը:

Բարձրագույն կրթությամբ զբաղվող ուսանողների հմտությունների զարգացումը շարունակելու համար, Adobe-ին առաջարկում է անվճար «Ամենօրյա ստեղծագործական մարտահրավերներ»: Սրանք ուղղորդված ծրագրեր են, որտեղ մասնակիցները ստանում են ստեղծագործական հուշումներ և հետադարձ կապի և աջակցության համար կապվում են մասնագետների, դաստիարակների և այլ ուսանողների հետ: Լրացուցիչ տեղեկությունների համար սեղմեք ծրագրի անվան վրա՝ Photoshop, XD և Illustrator: Նաև ոգեշնչման և ուսուցման համար հետևեք, թե ինչպես են դրական մասնագետները կիսում իրենց ստեղծագործական գործընթացը Adobe Live- ում ամեն օր՝ www.behance.net/adobeli:

Ամառվա դասացուցակը կիրառարակվի երկուշաբթի օրը՝ ապրիլի 20-ին, առցանց: Մենք կունենանք երեք նստաշրջան՝ երկու 5-շաբաթանոց և մեկ 8-շաբաթանոց: Ամառային գրանցումը կսկսվի մայիսի 5-ին: Որոշ դասընթացներ նշանակված են որպես համաժամանակյա հանդիպումներ, այսինքն՝ դասացուցակում նշվելու են դասի «հանդիպումների» ժամանակներն ու օրերը:

«Աշուն 2020» դասերի դասացուցակը փակցնելու համար մենք չունենք կոնկրետ ժամանակացույց: Մենք կսպասենք ևս մի քանի շաբաթ՝ հետևելու մեր տարածքում համաճարակի առաջընթացին, նախքան մենք կհայտարարենք «Աշուն 2020» դասերի ավարտի օրերը:

Ուսանողական ծառայություններ բաժնի կողմից

Ուսանողները կստանան իրենց ֆինանսական երկրորդ օգնությունը 2020 թվականի ապրիլի 22-ին: Հուսով ենք, որ մինչ այդ ժամանակ ուսանողները հաստատված կլինեն և հաջողությամբ իրենց դասերն առցանց ավարտի կհասցնեն: Եթե դուք դեռ օգնության կարիք ունեք՝ վիրտուալ ուսմանը անցնելու հարցում, գրեք hotline-students@lacitycollege.edu էլեկտրոնային հասցեին և մեր welcome center-ի աշխատակիցները կօգնեն ձեզ: Ուսանողները մինչև մայիսի 10-ը պետք է դիմեն pass/no pass-ի անցնելու համար: Դուք նաև ունեք մինչև մայիսի 10-ը դասերը դադարեցնելու և EW (emergency withdrawal) ստանալու համար, որը չի ազդի դրանց բավարար առաջընթացի կամ դասեր վերցնելու փորձեր կատարելու քանակի վրա:

Վերջապես, քոլեջի ղեկավարներն ու աշխատակիցները հաջորդ շաբաթվանից կվերսկսեն իրենց պլանավորված ժողովները: Մա նշանակում է, որ ես պետք է փոխեմ իմ Թաունհո հանդիպումները, որպեսզի դրանք միննույն ժամանակ չլինեն: Հաջորդ շաբաթվանից սկսած՝ երեքշաբթի և հինգշաբթի կեսօրին ժամը 12:30-ին մենք կունենանք Թաունհաուս հանդիպումը:

ՀԻՇԵՑՈՒՄ. Հաջորդ երկուշաբթի օրը՝ ապրիլի 13-ը, ոչ ուսումնական օր է: Դասախոսներն ու ուսանողները հաճելի երկար հանգստյան օր կունենում: Վայելեք ձեր հանգիստը և հանգստացեք:

ՀԱՎԱՏԱՆՎԱՃԻՐ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԻՐ

Լավ և ապահով եղեք՝

Մերի